МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«06» հոկտեմբեր 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ՍՈՒՐԵՆ ՕՀԱՆՅԱՆ ՄԵԼՍԻԿԻ» ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-24/09» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Սուրեն Օհանյան Մելսիկի» ԱՁ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված լիազորագրում արձանագրվել են անճշտություններ: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և Մասնակցին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չեն արվել համապատասխան շտկումները, ինչի հետևանքով՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Մասնակցի հայտը 1-2 չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որոշեցի՝

1. «Սուրեն Օհանյան Մելսիկի» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և Մասնակցին տրամադրելու օրվանից:

3. Որոշումը կայացվելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Սուրեն Օհանյան Մելսիկի» ԱՁ-ին:

4. Ստորև ներկայացնում եմ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու փաստը հավաստող տեղեկատվությունը.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշ/	Գործու նեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման, ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
ԱՁ «Սուրեն Օհանյան Մելսիկի»	72953958	Ք. Երևան, Անդրանիկի 3/1	V			Որոշման ամսաթիվը՝ 06.06.2024թ., Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-24/09»

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի
առաջատար մասնագետ Սիրանուշ Հարությունյան հեռ. 060 38-00-40